



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
«**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ**»



*Ա. Միսսիսյան*

**Ա. ՄԻՆԱՍՅԱՆ**

«30» 10 2017թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

**ԲՓ 96**

**Ձեռնարկողը՝**

**<<Գեորգարյնախագիծ>> ՍՊԸ**

*Ք. Երևան Ռուբինյանց 1 ա բն 42*

**Գործունեությունը՝**

**Բալահովիտ համայնքի /բնակավայրի/ պարզեցված  
գլխավոր հարակազմի շրջակա միջավայրի  
վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

*<< Կոտայքի մարզ*

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի  
տնօրեն՝**



*Վ. Սահակյան*

**Վ. Սահակյան**

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 96

«30» 10 2017թ.

**ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Ձեռնարկող՝

<<Գեոքարտնախագիծ>> ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Հիմնադրության փաստաթուղթ



*Արաբա Վեյ Երեւել / Բ.Տ.Ս. Երեւել /*

«ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը՝ համատեղված համայնքի կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքների գոտևորման նախագծի հետ, մշակվել է «Գեոքարտնախագիծ» ՍՊԸ-ում, ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքի պատվերով (Պայմանագիր ԿՄԲԳ-ԱՇՁԲ 39):

Բալահովիտ համայնքը գտնվում է Կոտայքի մարզի հարավ-արևմտյան մասում, որը տարածվում է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը: Հյուսիսից Կոտայքի սարավանդը սահմանափակում է Գուբանասար /2299մ/, հյուսիս-արևելքից՝ Հատիս /2528մ/ լեռնազանգվածը: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով ծուլվում է Արարատյան դաշտին: Ռելիեֆը մեղմ ալիքավոր է, տեղ-տեղ բարձրանում են 50-60մ հարաբերական բարձրությամբ մնացորդային բլուրներ և խարամային կոներ: Այն հարակից է Արզնի, Մայակովսկի, Ադինջ, Գետամեջ, Վերին Պտղնի, Պտղնի, գետարգել գյուղական և Աբովյան քաղաքային համայնքների հետ: Տեղակայված է 1200-1500մ բացարձակ նիշերով տեղանքի վրա: Հեռավորությունը Երևան քաղաքից 15կմ է, իսկ մարզկենտրոնից՝ /ք. Հրազդան/ 50կմ, զբաղեցրած տարածքը 522.99հա:

Բալահովիտ համայնքում ներկայումս բնակվում է 3461 մարդ, հեռանկարում՝ 3761 մարդ: Շրջանի կլիման չոր է և խիստ ցամաքային (ամռանը մինչև +38°C, իսկ ձմռանը -28°C): Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 400-500մմ: Ձյան ծածկույթի միջին հաստությունը հասնում է 15-30սմ: Հողի սառցակալման առավելագույն խորությունը հասնում է 82սմ:

Բնակավայրի տարածքի կառուցապատումը ներկայացված է բնակելի կառուցապատմամբ, հասարակական սպասարկման օբյեկտների կենտրոնացած տեղակայմամբ:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 522.99հա: Համայնքի հողերից 76.67հա ներկայումս ունի գյուղատնտեսական նշանակություն, հեռանկարում կլինի 69.756հա: Բնակավայրերի հողերը կազմում են 222.30հա, հեռանկարում՝ 222.365հա,



արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերը՝ 83.49հա, հեռանկարում՝ 83.67հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողերը՝ 31.08հա, հեռանկարում՝ 27.74 հա, հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ 45.78հա, հեռանկարում՝ 52.88հա, հատուկ նշանակության հողեր՝ 56.56հա հեռանկարում՝ 58.99հա, անտառային հողեր՝ 1.0հա հեռանկարում՝ 1.58հա, ջրային հողեր՝ 6.11հա հեռանկարում 6.01հա:

Բալահովիտ համայնքի բնակչության հիմնական մասը զբաղվում է հողագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ: Բնակիչների զգալի մասը աշխատում են Երևան և Աբովյան քաղաքներում, ինչպես նաև համայնքում գտնվող արտադրական ու սպասարկման ձեռնարկություններում:

Բալահովիտ համայնքի բնակելի տարածքները նախատեսված են հիմնականում բնակելի կառուցապատման, դրանց ենթակառուցվածքների, հասարակական նշանակության օբյեկտների առաջնային տեղակայման համար: Բնակելի գոտիները իրականացված և նախատեսված են տնամերձ հողամասերով:

Բնակավայրի կառուցապատումը հիմնականում կանոնավոր է: Համայնքի միջնամասում են գտնվում երկու հարկանի դպրոցը՝ 420 աշակերտական տեղով, մշակույթի տունը, գյուղապետարանը, ամբուլատորիան և մանկապարտեզը:

Գյուղական բնակավայրի տարածքի ճարտարապետահատակագծային կազմակերպման հիմքում դրվել են հետևյալ հիմնական սկզբունքներ՝ գյուղի միասնական հատակագծային կառուցվածքի կատարելագործում, հին և նոր թաղամասերի հատակագծային կապերի ստեղծում, համայնքի հետագա զարգացումը խթանող նոր ֆունկցիոնալ գոտիների ստեղծում՝ հիմք ընդունելով առկա ռեսուրսային հնարավորությունները, արտադրական և կոմունալ օգտագործման տարածքների կանոնակարգում, սանիտարական պահպանական գոտիների պահանջների ապահովում:

Հաշվի առնելով տարածքի գերակշռող գործառնական օգտագործումը, կառուցապատման կանոնակարգման անհրաժեշտությունը, առաջարկված են հետևյալ կառուցվածքահատակագծային սկզբունքները՝ առավելապես տնամերձ հողամասերով՝ ցածրահարկ 1-2 հարկանի առանձնատնային կառուցապատման նոր բնակելի տարածքային կազմակերպում:

Բալահովիտ գյուղի ջրամատակարարման համակարգը սնվում է բնակավայրի հարավ-արևելյան հատվածում գտնվող ՕԿՋ-ից, որը իր հերթին սնվում է Կաթնաղբյուր-Երևան Փ1000 ջրատարից:

Ջրամատակարարման համակարգի տեխնիկապես վատ վիճակը, ջրատար խողովակների մաշվածությունը և քայքայվածությունը, այս ամենը բերում է մեծ հոսակորուստների: Ջրամատակարարման համակարգը կենտրոնացված է: Բնակչությանը խմելու-կենցաղային, արտադրական և հակահրդեհային ջրապահանջներն իրականացվում են երեք ջրատարով:

Պահանջները բավարարելու համար անհրաժեշտություն է առաջանում, հեռանկարում նոր ՕԿՋ տեղադրելու: Առաջարկվում է նոր խորքային հորերից եկող ջրագծերը ուղղել ՕԿՋ՝ վերանորոգումից հետո, և կառուցել նոր ՕԿՋ նոր թաղամասի համար և նոր ցանց, ընդգրկելով խորքային հորերի ջրամատակարարումները:

Նախատեսվում է խմելու ջրագծերի վերակառուցում՝ պոլիէթիլեն խողովակներով:

Բնակչության մեկ մարդու օրական ջրապահանջը հաշվարկային տարում ընդունվում է 150լ/օր:

Բալահովիտ համայնքը ներկայումս կոյուղացված չէ: Բնակիչներն օգտվում են հորատիպ զուգարաններից: Համայնքի զարգացման պլանով նախատեսվում է ամբողջովին կոյուղացնել համայնքը՝ բնակավայրի հարավ-արևմտյան հատվածում կառուցելով



կենսաբանական մաքրման կայան՝ ժամանակակից տեխնոլոգիաներով: Ըստ կատարված նախնական հաշվարկների հեռանկարում՝ համայնքի հեռացման ենթակա կեղտաջրերի /կոմունալ կենցաղային և արտադրական/ միջին օրական քանակը կկազմի 10.3լ/վրկ, առավելագույնը՝ 22.2լ/վրկ: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը դեպի մաքրման կայան /որտեղ դրանք կենթարկվեն լրիվ կենսաբանական մաքրման/ կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների միջոցով:

Այն արտադրական օբյեկտներում, որոնց հեռացման ենթակա հոսքաջրերը կարող են պարունակել կոյուղու համակարգը վնասող կամ դրա աշխատանքը խոչընդոտող նյութեր, անհրաժեշտ է /նախքան կոյուղու միասնական համակարգին միանալը/ իրականացնել կեղտաջրերի նախնական մաքրում՝ մաքրման աստիճանը համաձայնեցնելով մաքրման կայանը շահագործող ընկերության հետ:

Ներկայումս Բալախովիտ համայնքը հեղեղատար կոյուղի չունի, հալոցքից և անձրևներից առաջացած ջրերը անկանոն ձևով առանց մաքրման հեռացվում են դեպի գյուղի միջնամասով անցնող սելաֆատար:

Սույն զարգացման պլանով կենցաղային կոյուղուն զուգահեռ նախատեսվում է նաև կառուցել հեղեղատար կոյուղի, ինչը հնարավորություն կտա մթնոլորտային տեղումների ամբողջ ելքը հավաքել և ենթարկել մաքրման: Հեղեղատար ցանցերը կախված թաղամասերի նշանակությունից և ճարտարապետական որոշումներից կարող են լինել բաց աովակների կամ փակ խողովակաշարերի ձևով:

Հեղեղատար կոյուղու համար կարող են օգտագործվել կերամիկական և ե/բետոնե խողովակներ և կիսախողովակներ:

Բալախովիտ համայնքի բնակչությունը տնամերձ հողամասերի ոռոգման համար ջուր է վերցնում Ակունք գետից: Ջրային ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման բնապահպանական միջոցառումներ:

- Խմելու և տեխնիկական ջրամատակարարման գոյություն ունեցող բաշխիչ ցանցի հիմնանորոգում և վերակառուցում, ինչպես նաև սույն հատակագծով կառուցապատման ենթակա տարածքների համար նոր ցանցի նախատեսում:

- Ջրամատակարարման բոլոր համակարգերում (գլխամասային կառույցներ, ՕԿՋ-ներ) սանիտարական 1-ին (30-50 մ շառավղով) և 2-րդ (սահմանները կախված են հիդրոերկրաբանական ուսումնասիրությունների արդյունքներից և համաձայնեցվում են սանհիգիենիկ ծառայությունների հետ) գոտիների սահմանում:

- Ջրամատակարարման գլխամասային կառույցների հերմետիկության ապահովում, ինչպես նաև խմելու ջրի վարակազերծում և ամենօրյա լաբորատոր հսկողություն:

- Ջրաչափերի տեղադրում բոլոր սպառողների մոտ:

- Հոսակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված անընդհատ աշխատանքների իրականացում:

- Բնակավայրի լրիվ կոյուղացում, սույն հատակագծով կառուցապատման ենթակա տարածքների համար ջրահեռացման ցանցի նախատեսում:

- Ժամանակակից տեխնոլոգիաներով կենսաբանական մաքրման կայանի նախատեսում (հզորությունը համաձայն ներկայացվող հատակագծի հաշվարկների):

Ջրօգտագործողների արտահոսքերի որակական և քանակական խիստ վերահսկողություն օրենքների պահանջի սահմաններում:

- Կոյուղու կեղտաջրերի լրիվ մաքրում և վարակազերծում՝ հաշվի առնելով մակերևութային ջրերն աղտոտումից պաշտպանելու պահանջները:

- Հեղեղատար ցանցի կառուցում արևմտյան և հարավային հոսքերի համար:



- Ակունք և Գետառ գետերի հունի մաքրում տիղմից և աղբից, պարբերաբար մաքրել հեղեղակարգավորիչ առուները խոշոր չափերի ջրաբերուկների քարերի հեռացման նպատակով:

- Ոռոգման ցանցի հիմնանորոգում հաշվի առնելով շինարարական նորմատիվների պահանջները:

- Ոռոգման կայունությունը և ջրի սանիտարական թողը ապահովելու նպատակով ուսումնասիրել Բալահովիտ համայնքի մուտքում կարգավորիչ ջրամբարի կառուցման նպատակահարմարությունը:

- Ոռոգման խնայողական եղանակների ներդրում:

- Ակունք գետի ջրի որակի վերահսկողություն համայնքի մուտքում և համայնքի հարավային և արևմտյան սահմանագծում, նպատակ ունենալով ստուգել ջրի որակի համապատասխանությունը ՀՀ կառավարության 27 01 2011 թ. N 75-Ն որոշմամբ ոռոգման ջրի որակին ներկայացվող պահանջի:

- Կենսաբանական մաքրման ավազանի կառուցում ապակյա տարաների արտադրության գործարանի սահմանում:

- Կատարել առափնյա ծառատնկումներ կանխարգելելու համար ափերի ողողատարումները:

Բալահովիտ համայնքի էլեկտրամատակարարումը կատարվում է ՀԷՑ-ի տարածաշրջանային էներգետիկ ցանցից և իրականացվում է առանձին ենթակայաներից ու տրանսֆորմատորներից: Համայնքի տարածքով անցնում են բարձր լարվածության տարբեր էլեկտրահաղորդման գծեր:

Վերակառուցման ժամանակ նախատեսված են գոյություն ունեցող 35-110կվ և ավելի բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի դուրս բերում բնակելի, հասարակական-գործարարական գոտիների սահմաններից, կամ օդային գծերի փոխարինումը մալուխայինով:

Բալահովիտ համայնքը ներկայումս գազաֆիկացված է: Թաղամասերում կան գազաբաշխիչ կետեր, որոնք թվով հինգն են: Գազաֆիկացումը իրականացված է գյուղ մտնող միջին ճնշման գազատարից: Միջին ճնշման գազատարից գազը մտնում է գազաբաշխիչ կայան, որտեղ ստացվող ցածր ճնշման գազը խողովակներով մատակարարվում է բնակչությանը կենցաղային և ջեռուցման կարիքների բավարարման համար: Բնակչության աճին զուգընթաց կկառուցվեն նոր թաղամասեր և նոր գազամատակարարման ցանց ճկմ երկարությամբ, և երկու հատ գազաբաշխիչ սարքեր:

Ըստ կատարած նախնական հաշվարկների, Բալահովիտ գյուղի գազի հաշվարկային տարեկան ծախսը միջին թվով՝ 1.05մլն. մ<sup>3</sup>/տարի:

Ներկայումս Բալահովիտ գյուղում ջերմամատակարարումը գործում է մասնակի: Անհատական տները ջեռուցվում են վառարաններով:

Կուլտուր-կենցաղային, հասարակական շենքերի ջերմային կարիքները բավարարելու համար նպատակահարմար է ունենալ կաթսայատուն:

Համայնքի հեռանկարային զարգացման համար նախատեսված տները կունենան տեղական ջեռուցում և տաք ջրամատակարարում:

Բալահովիտ համայնքը ունի երկու գերեզմանոց: Արևելյան մասում գտնվող գերեզմանոցում այլևս թաղումներ չեն կատարվում: Այժմ գործում է հարավային մասում գտնվող գերեզմանոցը, որը բավականին հեռու է համայնքի բնակելի մասից:

Երկու գերեզմանոցներն էլ չունեն սանիտարապաշտպանիչ գոտիներ: Համայնքի զարգացման պլանում որպես բնապահպանական միջոցառում առաջարկվում է գերեզմանոցների ծառապատում պարագծով՝ սանիտարապաշտպանիչ գոտու ստեղծմամբ:

Ներկայումս իրականացման փուլում է Կոտայքի մարզի աղբահանության կառավարման ծրագիրը, որի շրջանակներում Հրազդանում կկառուցվի նոր ժամանակակից աղբավայր:

Ծրագիրը նախատեսում է բնակավայրերում կազմակերպել փոքր տարողությամբ աղբահավաք վայրեր, որտեղից պարբերաբար աղբը կտեղափոխվի Հրազդան քաղաքի աղբավայր: Բալահովիտ համայնքում ներկա դրությամբ գործում է ժամանակավոր աղբավայր, որտեղից էլ աղբը հետագայում կտեղափոխվի Հրազդանի աղբի վերամշակման գործարան:

Բալահովիտ համայնքապետարանում տեղի են ունեցել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված հանրային քննարկումներ, որոնց ընթացքում հնչած առաջարկությունները հաշվի են առնվել նախագծի լրամշակումների ընթացքում և հանրության կողմից հավանության է արժանացել: Հատակագծում լուծված են կեղտաջրերի մաքրման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, աղմուկի մակարդակի նվազեցման և կանաչապատման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Ընդհանուր առմամբ հեռանկարային զարգացման ընթացքում գլխավոր հատակագծում նախատեսված միջոցառումների արդյունքում Բալահովիտ համայնքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմայի սահմաններում:

### Փորձաքննական պահանջ

Հիմնադրությային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գեոքարտնախագիծ» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:



Մասնագետ՝

*K. V. V. V.*

Հ. Մեսրոպյան